

Համարը
Տիպը Համաձայնագիր
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ

2015.01.21/3(1092)

Հոդ.30

Ընդունող մարմինը Հայաստանի
Հանրապետություն

Ստորագրող մարմինը

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 02.01.2015

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Սանկտ
Պետերբուրգ

Ընդունման ամսաթիվը 21.05.2010

Ստորագրման ամսաթիվը 21.05.2010

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

☐ **Ծանուցում**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

☒ **Կապեր այլ փաստաթղթերի հետ**

[27.11.2009 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՄԱՍԻՆ](#)

☒ **Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

Մայր փաստաթուղթ: [ՀՀ, 21.05.2010](#)

Մայր փաստաթղթին փոփոխող փաստաթղթերը՝

Համապատասխան ինկորպորացիան՝

[ՀՀ, 10.10.2014,](#)

ՀՀ, 21.05.2010,

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈՒՍԱԴԱՐՁ ՎԱՐՉԱՎԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈՒՍԱԴԱՐՁ ՎԱՐՉԱՎԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր, հիմնվելով «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագրի վրա, համաձայնեցին հետևյալի մասին.

Մաս I. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1

Համաձայնագրի գործողության ոլորտը

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինները (այսուհետ՝ մաքսային մարմիններ) սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան՝

փոխանակում են տեղեկություններ, որոնք նպաստում են Մաքսային միության մաքսային օրենսդրության և Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության պահանջների պահպանմանը.

Մաքսային միության այլ անդամ պետությունների մաքսային մարմինների հանձնարարականով իրականացնում են մաքսային հսկողության առանձին ձևեր.

փոխադարձաբար ճանաչում են մաքսային մարմինների կողմից ընդունված որոշումները:

Հոդված 2

Սույն Համաձայնագրում գործածվող եզրույթները

Սույն Համաձայնագրում գործածվում են հետևյալ հիմնական եզրույթները և դրանց սահմանումները.

1) կենտրոնական մաքսային մարմիններ՝

Հայաստանի Հանրապետության համար՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, Բելառուսի Հանրապետության համար՝ Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտե.

Ղազախստանի Հանրապետության համար՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության մաքսային հսկողության կոմիտե.

Ռուսաստանի Դաշնության համար՝ Ռուսաստանի Դաշնության դաշնային մաքսային ծառայություն.

2) տարածքային մաքսային մարմիններ՝

Հայաստանի Հանրապետության համար՝ մաքսատներ,
Բելառուսի Հանրապետության համար՝ մաքսատներ,
Ղազախստանի Հանրապետության համար՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության
մաքսային հսկողության կոմիտեի տարածքային ստորաբաժանումներ՝ ըստ շրջանների (ըստ հանրապետական
նշանակության քաղաքների, մայրաքաղաքի) մաքսատներ,
Ռուսաստանի Ղաշնության համար՝ տարածաշրջանային մաքսային վարչություններ և մաքսատներ.
3) հարցում ուղարկող մաքսային մարմին՝ մաքսային մարմին, որը սույն Համաձայնագրին համապատասխան
հարցում է ուղարկում.
4) հարցում ստացող մաքսային մարմին՝ մաքսային մարմին, որը սույն Համաձայնագրին համապատասխան
հարցում է ստանում.
5) հանձնարարող մաքսային մարմին՝ մաքսային մարմին, որը սույն Համաձայնագրին համապատասխան
հանձնարարական է ուղարկում.
6) կատարող մաքսային մարմին՝ մաքսային մարմին, որը սույն Համաձայնագրին համապատասխան
հանձնարարական է ստանում:
*(2-րդ հոդվածը լրաց. 10.10.14 «ՀՀ «ԵՏՍՄ մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին»
պայմանագրի արձանագրություն)*

Մաս II. Մաքսային մարմինների միջև տեղեկությունների փոխանակումը

Հոդված 3

Տեղեկությունների փոխանակման կազմակերպումը

1. Մաքսային մարմինները սեփական նախաձեռնությամբ կամ հարցման հիման վրա միմյանց տրամադրում են
տեղեկություններ՝ ներառյալ փաստաթղթերը կամ դրանց հաստատված պատճենները՝ Մաքսային միության մաքսային
օրենսդրության և (կամ) Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության պահանջները պահպանելու,
ինչպես նաև Մաքսային միության մաքսային օրենսդրության և (կամ) Մաքսային միության անդամ պետությունների
օրենսդրության խախտումները կանխելու նպատակով:
2. Մաքսային մարմինների միջև տեղեկությունների փոխանակումն իրականացվում է գրավոր և (կամ)
էլեկտրոնային եղանակով՝ հետևյալի միջոցով՝
հարցումների ուղարկում և տեղեկությունների տրամադրում.
սեփական նախաձեռնությամբ տեղեկությունների ուղարկում.
նորմատիվ և այլ իրավական ակտերի փոխանակում:
3. Կենտրոնական մաքսային մարմինները համատեղ որոշում են տեղեկատվական փոխանակման համար
անհրաժեշտ տեղեկությունների կազմը, մշակում և համաձայնեցնում են տեղեկատվական փոխադրոժակցության
տեխնիկական պայմանները և տվյալների մշակման ու փոխանցման տեխնոլոգիաները, տեղեկությունների
պաշտպանության մասով պահանջները:
4. Կենտրոնական մաքսային մարմինները սույն Համաձայնագիրը ստորագրելուց հետո վեց ամսվա ընթացքում
համաձայնեցնում են Տեղեկությունների էլեկտրոնային եղանակով փոխանակումը կազմակերպելու տեխնիկական
պայմանները, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածով, այդ թվում՝
1) տեղեկությունների փոխանակման կազմակերպման կարգը.
2) տեղեկությունները տրամադրելու եղանակները.
3) տեղեկությունների պաշտպանության մասով պահանջները.
4) տեղեկությունների կառուցվածքը, կազմը և ձևաչափը:
Տեղեկությունների էլեկտրոնային եղանակով փոխանակումն իրականացվում է մաքսային մարմինների միջև նրանց
տեխնիկական պատրաստվածությունն ապահովելուց հետո, որի մասին կենտրոնական մաքսային մարմինները
գրավոր տեղեկացնում են միմյանց:
5. Կենտրոնական մաքսային մարմինները իրավունք ունեն իրականացնելու տեղեկությունների փոխադրոժ
փոխանակում
ձևակերպման համար կիրառվող միջոցների, ինչպես նաև այլ տեղեկությունների մասով, որոնք նպաստում
են մաքսային հսկողության արդյունավետության բարձրացմանը.
Մաքսային միության Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի
(այսուհետ՝ ԱՏԳ ՄԱԱ) ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումների մասով.
մաքսային հարցերով փորձագետների եզրակացությունների մասով.
Մաքսային միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանման նկատմամբ հսկողություն
իրականացնելիս.
Մաքսային միության մաքսային տարածքով ապրանքների փոխադրումների նկատմամբ հսկողություն
իրականացնելիս՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան կենտրոնական մաքսային
մարմինների կողմից սահմանված կարգով.
կենտրոնական մաքսային մարմինների կողմից սահմանվող այլ տեղեկությունների փոխանակում:

Հոդված 4

Տեղեկությունների էլեկտրոնային եղանակով փոխանակումը

Կենտրոնական մաքսային մարմինները կանոնավոր կերպով իրականացնում են հետևյալ տեղեկությունների
փոխանակումը էլեկտրոնային եղանակով՝
1) մաքսային հայտարարագրերի տվյալների բազաներից տեղեկություններ համաձայնեցված այն դիրքերի մասով,

որոնք սահմանված են Տեղեկությունների էլեկտրոնային եղանակով փոխանակումը կազմակերպելու տեխնիկական պայմաններում սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ բացառությամբ պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների,

2) ԱՏԳ ՄԱԱ-ի համաձայն ապրանքների դասակարգման մասին նախնական որոշումների տվյալների բազաներից տեղեկություններ համաձայնեցված այն դիրքերի մասով, որոնք սահմանված են Տեղեկությունների էլեկտրոնային եղանակով փոխանակումը կազմակերպելու տեխնիկական պայմաններում սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ բացառությամբ պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների:

Հոդված 5

Հարցումներ ուղարկելու հիմքերը

1. Փաստաթղթեր և տեղեկություններ տրամադրելու մասին հարցում (այսուհետ՝ հարցում) ուղարկելու հիմքերն են՝
1) տեղեկությունների փոխանակման արդյունքում ապրանքների, միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների և (կամ) ապրանքների նկատմամբ իրավասու անձանց մասին տվյալներում անհամապատասխանությունների առկայությունը,

2) այնպիսի տվյալների առկայությունը, որոնք վկայում են Մաքսային միության մաքսային օրենսդրության և Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրության պահանջների հնարավոր խախտման մասին, որի մաքսային մարմինը ուղարկել է հարցումը,

3) մաքսային մարմինների կողմից մաքսային հսկողության իրականացումը:

2. Հարցումը կարող է ուղարկվել այլ հիմքերով, որոնք նախատեսված չեն սույն հոդվածի 1-ին կետով:

Հոդված 6

Հարցումներ ուղարկելու կարգը

1. Հարցումների և դրանց պատասխանների փոխանակումը կատարվում է ինչպես կենտրոնական մաքսային մարմինների, այնպես էլ անմիջականորեն տարածքային մաքսային մարմինների միջև:

Այն դեպքերում, երբ հնարավոր չէ որոշել, թե որ մաքսային մարմին պետք է ուղարկել հարցումը, հարցումներն ուղարկվում են կենտրոնական մաքսային մարմինների միջոցով:

2. Հարցումը ձևակերպվում է նամակի տեսքով, որը ստորագրվում է հարցում ուղարկող մաքսային մարմնի պետի (ղեկավարի) կամ նրա տեղակալի կողմից:

Հարցումները և դրանց պատասխանները կարող են ուղարկվել էլեկտրոնային փոստով կամ ֆաքսիմիլային կապի միջոցով, որից հետո այն պետք է ուղարկվի նաև փոստով:

3. Հարցումը պետք է ներառի՝

1) հարցում ուղարկող մաքսային մարմնի և այն մաքսային մարմնի անվանումը, որին ուղարկվում է հարցումը.

2) հղում սույն Համաձայնագրին.

3) գործի էության համառոտ նկարագիրը.

4) սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածին համապատասխան հարցում ուղարկելու հիմքերը.

5) Մաքսային միության մաքսային օրենսդրության և (կամ) Մաքսային միության անդամ պետության օրենսդրության դրույթների մատնանշում, որոնց պահպանումը պետք է ստուգվի հարցումը կատարելու արդյունքում.

6) հարցվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը.

7) այլ տեղեկություններ, որոնք, հարցում ուղարկող մաքսային մարմնի կարծիքով. անհրաժեշտ են հարցումը կատարելու համար:

4. Հարցմանը կարող են կցվել այն փաստաթղթերի պատճենները, որոնց հղում է արվում հարցման տեքստի մեջ (բացառությամբ նորմատիվ իրավական ակտերի պատճենների), ինչպես նաև մաքսային, առևտրային, տրանսպորտային (փոխադրման) և այլ փաստաթղթերի հաստատված պատճենները, որոնք առնչություն ունեն հարցման էության հետ:

5. Փաստաթղթերի բնօրինակները կարող են պահանջվել այն դեպքերում, երբ հաստատված պատճենների տրամադրումը համարվում է ոչ բավարար, և պետք է վերադարձվեն հնարավորինս կարճ ժամկետներում:

Հոդված 7

Հարցումներ կատարելու կարգը

1. Հարցումը կատարվում է այն ստանալուց հետո մեկ ամիսը չգերազանցող ժամկետում: Եթե անհրաժեշտ է այդ ժամկետը կրճատել, ապա հարցման տեքստում կատարվում է համապատասխան նշում դրա պատճառի և հարցումը կատարելու ցանկալի ժամկետի մասին:

Սույն հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում նախատեսված դեպքերում հարցումը կատարելու ժամկետը երկարաձգվում է այնքան ժամանակով, որքան անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

Եթե նշված ժամկետում անհնար է կատարել հարցումը մասամբ կամ ամբողջությամբ, ապա հարցում ստացող մաքսային մարմինը հարցում ուղարկող մաքսային մարմնին տեղեկացնում է կատարման ենթադրվող ժամկետների մասին:

2. Եթե մաքսային մարմինը չի տիրապետում հարցվող տեղեկություններին, ապա այն միջոցներ է ձեռնարկում դրանք ստանալու ուղղությամբ՝ գործելով սեփական անունից, իր պետության օրենսդրությանը համապատասխան:

3. Հարցում ստացող մաքսային մարմինն իրավասու է՝

1) լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու խնդրանքով դիմել հարցում ուղարկող մաքսային մարմնին, եթե դա անհրաժեշտ է հարցումը կատարելու համար.

2) մերժել հարցում ուղարկող մաքսային մարմնին հարցումը կատարելու հարցում՝ գրավոր ծանուցելով մերժման և

դրա պատճառների մասին՝ սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածում նշված դեպքերում:

4. Հարցում ստացող մաքսային մարմինը հարցում ուղարկող մաքսային մարմին է ուղարկում հարցման պատասխանը, ինչպես նաև համապատասխան նյութերը՝ հարցումը պարունակող նամակը ստորագրած պաշտոնյայի անունով:

5. Հարցում ստացող մաքսային մարմինը հարցմանն ի պատասխան ներկայացնում է՝ փաստաթղթեր (կամ դրանց հաստատված պատճենները) և տեղեկություններ, որոնց համար դիմել է հարցում ուղարկող մաքսային մարմինը.

մաքսային հսկողության իրականացված ձևերի և դրա արդյունքների մասին տեղեկություններ, եթե հարցում ստացող մաքսային մարմինը իրականացրել է մաքսային հսկողությունը սեփական նախաձեռնությամբ.

այլ փաստաթղթեր (կամ դրանց հաստատված պատճենները) և տեղեկություններ, որոնք կարող են նպաստել հարցում ուղարկող մաքսային մարմնի կողմից որոշումների և միջոցների ընդունմանը, որոնք նախատեսված են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և (կամ) Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությամբ, որի մաքսային մարմինը ուղարկել է հարցումը:

6. Մաքսային մարմինները փոխանակում են մաքսային այն հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ, որն իրականացվում է սույն հոդվածի հիմքով ստացված տեղեկություններն օգտագործելով:

Հոդված 8

Հարցման հիման վրա տեղեկությունների տրամադրումը մերժելը

Հարցման հիման վրա տեղեկությունների տրամադրումը մերժվում է, եթե՝

1) հարցումը չի համապատասխանում սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածում նշված պահանջներին.

2) հարցում ուղարկող մաքսային մարմինը չի տրամադրել անհրաժեշտ տեղեկությունները՝ հարցումը կատարելու համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու մասին իրեն հասցեագրված հարցումն ուղարկվելուց հետո երկու ամսվա ընթացքում.

3) հարցման կատարումը կարող է վնաս հասցնել Մաքսային միության անդամ պետության ինքնիշխանությանը, ազգային անվտանգությանը, հակասում է նրա օրենսդրությանը կամ Մաքսային միության այն անդամ պետության միջազգային պայմանագրերին, որի մաքսային մարմին ուղարկվել է հարցումը.

4) հարցումն օբյեկտիվորեն չի կարող կատարվել հարցում ստացող մաքսային մարմնից անկախ պատճառներով.

5) հարցում ստացող մաքսային մարմինը հարցումը կատարելու համար բավարար չի համարում այն հիմքերը, որոնք նշված են հարցման մեջ՝ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան:

Հոդված 9

Սեփական նախաձեռնությամբ տեղեկություններ ուղարկելը

Մաքսային միության անդամ պետություններից մեկի մաքսային մարմինը սեփական նախաձեռնությամբ տեղեկություններ է ուղարկում Մաքսային միության մյուս անդամ պետության մաքսային մարմնին, եթե՝

1) տվյալ տեղեկությունները կարող են վկայել Մաքսային միության մաքսային օրենսդրության և (կամ) Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրության պահանջների հնարավոր խախտման մասին, որի մաքսային մարմնին ուղարկվում է հարցումը.

2) այլ հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ տեղեկությունները հետաքրքրություն են ներկայացնում տվյալ մաքսային մարմնի համար:

Հոդված 10

Նորմատիվ և այլ իրավական ակտեր փոխանակելը

Կենտրոնական մաքսային մարմինները կանոնավոր կերպով փոխանակում են Մաքսային միության անդամ պետությունների նորմատիվ և այլ իրավական ակտեր, որոնք վերաբերում են մաքսային հսկողությանը:

Մաս III. Մաքսային հսկողության առանձին ձևերի իրականացումը Մաքսային միության անդամ պետություններից մեկի մաքսային մարմնի կողմից՝ Մաքսային միության մեկ այլ անդամ պետության մաքսային մարմնին ուղղված հանձնարարականով

Հոդված 11

Մաքսային հսկողության առանձին ձևերի իրականացման վերաբերյալ հանձնարարական ուղարկելու հիմքերը

1. Մաքսային հսկողության առանձին ձևերի իրականացման վերաբերյալ հանձնարարական (այսուհետ՝ հանձնարարական) ուղարկելու հիմքերն են՝

1) այն ապրանքների առկայությունը հաստատելու անհրաժեշտությունը, որոնք գտնվում են մաքսային հսկողության տակ.

2) Մաքսային միության մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածով նախատեսված հիմքերով արտապլանային արտազնա մաքսային ստուգումներ անցկացնելու անհրաժեշտությունը, եթե ստուգման ենթակա անձը, որը պետք է անցնի արտազնա մաքսային ստուգում, ստեղծվել և (կամ) զրանցվել է Մաքսային միության մյուս անդամ պետության օրենսդրության համաձայն.

3) այնպիսի տվյալների առկայությունը, որոնք վկայում են Մաքսային միության մաքսային օրենսդրության և Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրության պահանջների հնարավոր խախտման մասին, որի մաքսային մարմինը ուղարկում է հարցումը:

2. Հանձնարարական կարող է ուղարկվել այլ այնպիսի հիմքերի առկայության դեպքում, որոնք նախատեսված չեն սույն հոդվածի 1-ին կետով:

Հոդված 12

Մաքսային հսկողության առանձին ձևերի իրականացման վերաբերյալ հանձնարարական ուղարկելու ձևը և կարգը

1. Հանձնարարականների և դրանց պատասխանների փոխանակումն իրականացվում է կենտրոնական մաքսային մարմինների միջև:

Կենտրոնական մաքսային մարմինների հետ համատեղ սահմանված դեպքերում հանձնարարականների և դրանց պատասխանների փոխանակումը կարող է իրականացվել տարածքային մաքսային մարմինների միջև:

2. Հանձնարարականը ձևակերպվում է նամակի տեսքով, որը ստորագրվում է հանձնարարող մաքսային մարմնի ղեկավարի կամ նրա տեղակալի կողմից:

Հանձնարարականները և դրանց պատասխանները կարող են ուղարկվել էլեկտրոնային փոստով կամ ֆաքսիմիլային կապի միջոցով, որից հետո դրանք պետք է ուղարկվեն նաև փոստով:

3. Հանձնարարականը պետք է պարունակի՝

1) հանձնարարող մաքսային մարմնի և այն մաքսային մարմնի անվանումը, որին ուղարկվում է հանձնարարականը.

2) հղում սույն Համաձայնագրին.

3) գործի էության համառոտ նկարագիրը.

4) սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածին համապատասխան հանձնարարական ուղարկելու հիմքերը.

5) մաքսային հսկողության այն ձևերը, որոնք պետք է իրականացնել.

6) ապրանքի, փաստաթղթերի և տվյալների, ինչպես նաև այն անձի մասին տեղեկությունները, որոնց նկատմամբ (որոնց մոտ) պետք է իրականացնել մաքսային հսկողություն.

7) հանձնարարականի էության հետ առնչվող նյութերը, այդ թվում՝ փաստաթղթերի պատճենները, որոնց հանձնարարականի տեքստի մեջ հղում է արվում (բացառությամբ նորմատիվ իրավական ակտերի պատճենների), ինչպես նաև մաքսային, առևտրային, տրանսպորտային (փոխադրման) և այլ փաստաթղթերի հաստատված պատճենները.

8) Մաքսային միության մաքսային օրենսդրության և (կամ) Մաքսային միության անդամ՝ հանձնարարականն ուղարկող մաքսային մարմնի պետության օրենսդրության դրույթների մատնանշումը, որոնց կատարումը պետք է ստուգվի հանձնարարականը կատարելու արդյունքում.

9) պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը.

10) այլ տեղեկություններ, որոնք, հանձնարարող մաքսային մարմնի կարծիքով, անհրաժեշտ են հանձնարարականը կատարելու համար:

4. Մաքսային հսկողության առանձին ձևեր իրականացնելու անհրաժեշտության դեպքում, եթե մաքսային գործառնությունները պետք է իրականացվեն նախքան ապրանքի բացթողումը, ապա հանձնարարականը ձևակերպվում է այնպիսի տվյալների փոխանցմամբ, որոնք բավարար են ռիսկի պրոֆիլ ձևավորելու համար: Նման հանձնարարականների ձևակերպման, ուղարկման և կատարման կարգը սահմանվում է կենտրոնական մաքսային մարմինների կողմից:

Հոդված 13

Մաքսային հսկողության առանձին ձևերի իրականացման մասին հանձնարարականներ կատարելու կարգը

1. Հանձնարարականը կատարվում է այն ստանալուց հետո երկու ամիսը չգերազանցող ժամկետում: Եթե անհրաժեշտ է այդ ժամկետը կրճատել, ապա հանձնարարականի տեքստում կատարվում է համապատասխան նշում դրա պատճառի և հանձնարարականը կատարելու ցանկալի ժամկետի մասին:

Սույն հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում նախատեսված դեպքերում հանձնարարականը կատարելու ժամկետը երկարաձգվում է այնքան ժամանակով, որքան անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

Եթե նշված ժամկետում անհնար է կատարել հանձնարարականը մասամբ կամ ամբողջությամբ, ապա կատարող մաքսային մարմինը հանձնարարող մաքսային մարմնին տեղեկացնում է կատարման ենթադրյալ ժամկետների մասին:

2. Կատարող մաքսային մարմինն իրավասու է՝

1) լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու խնդրանքով դիմել հանձնարարող մաքսային մարմնին, եթե դա անհրաժեշտ է հանձնարարականը կատարելու համար.

2) հանձնարարականի մեջ նշված մաքսային հսկողության ձևից բացի կիրառել մաքսային հսկողության այլ ձևեր.

3) մերժել հանձնարարող մաքսային մարմնին հանձնարարականը կատարելու հարցում՝ վերջինիս գրավոր ծանուցելով դրա մասին սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածում նշված դեպքերում:

3. Կատարող մաքսային մարմինը հանձնարարականի պատասխանը, ինչպես նաև համապատասխան նյութերն ուղարկում է հանձնարարող մաքսային մարմնին՝ հանձնարարականը պարունակող նամակը ստորագրած պաշտոնյայի անունով:

4. Կատարող մաքսային մարմինը հանձնարարականին ի պատասխան ներկայացնում է՝

1) մաքսային հսկողության իրականացված ձևերի և դրանց արդյունքների մասին տեղեկություններ (այդ թվում՝ սույն հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան իրականացված մաքսային հսկողության արդյունքների մասին).

2) մաքսային հսկողության արդյունքներով ձևակերպված փաստաթղթերի պատճենները.

3) հանձնարարող մաքսային մարմնի կողմից պահանջվող փաստաթղթերը (կամ դրանց հաստատված պատճենները), նյութերը, ապրանքների նմուշառումները և նմուշները.

4) այլ փաստաթղթեր (կամ դրանց հաստատված պատճենները) և տեղեկություններ, որոնք կարող են նպաստել հանձնարարող մաքսային մարմնի կողմից որոշումների և միջոցների ընդունմանը, որոնք նախատեսված են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և (կամ) Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությամբ, որի մաքսային մարմինը ուղարկել է հանձնարարականը:

Հոդված 14 **Հանձնարարականի կատարումը մերժելը**

Հանձնարարականի կատարումը մերժվում է, եթե՝

- 1) հանձնարարականը չի համապատասխանում սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածում նշված պահանջներին.
- 2) հանձնարարող մաքսային մարմինը չի տրամադրել անհրաժեշտ տեղեկությունները՝ հանձնարարականը կատարելու համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու մասին իրեն հասցեագրված հարցումն ուղարկվելուց հետո երկու ամսվա ընթացքում.
- 3) հանձնարարականի կատարումը կարող է վնաս հասցնել Մաքսային միության անդամ պետության ինքնիշխանությանը, ազգային անվտանգությանը, որի մաքսային մարմին ուղարկվել է հանձնարարականը.
- 4) հանձնարարականն օբյեկտիվորեն չի կարող կատարվել հանձնարարող մաքսային մարմնից անկախ պատճառներով.
- 5) կատարող մաքսային մարմինը մաքսային հսկողություն իրականացնելու համար բավարար չի համարում այն հիմքերը, որոնք նշված են հանձնարարականում՝ սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան:

Մաս IV. Ռիսկերի կառավարման համակարգի կիրառմամբ մաքսային հսկողության առանձին ձևերի իրականացումը

Հոդված 15

Մաքսային միության մաքսային օրենսդրության և (կամ) Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության խախտումների ռիսկերի մասին տեղեկությունների օգտագործման կարգը ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում

1. Կենտրոնական մաքսային մարմիններն իրավունք ունեն ուղարկելու տեղեկություններ Մաքսային միության մաքսային օրենսդրության և (կամ) Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության խախտումների ռիսկերի մասին (այսուհետ՝ տեղեկություններ ռիսկերի մասին):
Կենտրոնական մաքսային մարմիններից մեկի կողմից մյուս կենտրոնական մաքսային մարմնից ռիսկերի մասին տեղեկություններ ստանալու դեպքում, տեղեկություններ ստացող մաքսային մարմնի ռիսկերի վերլուծության և կառավարման ոլորտում լիազորված ստորաբաժանման պաշտոնատար անձինք՝ դրանք վերլուծում են Մաքսային միության անդամ պետության օրենսդրության հետ համապատասխանության մասով.
որոշում են, արդյոք հնարավոր է դրանց ձևային համապատասխանեցումը (ֆորմալիզացիան) հատուկ ծրագրային այնպիսի միջոցների շրջանակներում դրանք օգտագործելու համար, որոնք կիրառվում են ռիսկերի կառավարման համակարգերի ոլորտում.
որոշում են բացահայտված ռիսկի աստիճանը և ռիսկի հնարավոր բացասական հետևանքները.
որոշում են գործնական իրականացման հնարավորությունը՝ հաշվի առնելով մաքսային հսկողության իրականացման տեխնոլոգիայի առանձնահատկությունները, որոնք սահմանվել են Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.
հաշվի են առնում այլ հիմքեր, որոնք նշանակություն ունեն մաքսային հսկողություն իրականացնելու համար:
2. Ռիսկերի մասին տեղեկությունների վերլուծության արդյունքներով կարող է ընդունվել որոշում մաքսային հսկողության նպատակներով դրանց կիրառման կամ մերժման մասին:
3. Կենտրոնական մաքսային մարմիններից մեկի կողմից ստացված ռիսկերի մասին տեղեկությունները մերժելու դեպքում, տեղեկություններ ստացող մաքսային մարմինը սահմանված կարգով տեղեկացնում է շահագրգիռ կողմին տեղեկությունները մերժելու պատճառների մասին:
4. Մաքսային հսկողության նպատակներով ռիսկերի մասին տեղեկությունների օգտագործման մասին որոշում ընդունելու դեպքում տեղեկություններ ստացող մաքսային մարմինը գործողություններ է իրականացնում Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մաս V. Մաքսային մարմինների կողմից ընդունված որոշումների փոխադարձ ճանաչումը

Հոդված 16

Ռիսկերի կառավարման համակարգի համակարգման հարցերով Կողմերի փոխգործակցությունը

Կողմերի կենտրոնական մաքսային մարմինները կարող են փոխգործակցել՝ Մաքսային միության տարածքում ռիսկերի կառավարման համակարգի համակարգման նպատակներով:

Հոդված 17

Մաքսային մարմինների որոշումները, որոնք ենթակա են փոխադարձ ճանաչման

Մաքսային միության մաքսային տարածքում փոխադարձաբար ճանաչվում են և հավասար իրավաբանական ուժ ունեն մաքսային մարմինների այն որոշումները, որոնք՝

1) ընդունվել են Մաքսային միության մաքսային օրենսդրությանը համապատասխան Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող կամ դրա սահմաններից դուրս արտահանվող՝ մաքսային հսկողության տակ գտնվող և ժամանակավոր պահպանման տակ գտնվող այն ապրանքների հետ կապված մաքսային գործառնություններ կատարելիս, որոնք փոխադրվում են Մաքսային միության մաքսային տարածքով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան,

2) ընդունվել են Մաքսային միության մաքսային օրենսդրությանը համապատասխան՝ մաքսային հսկողություն իրականացնելիս:

Մաս VI. Եզրափակիչ դրույթներ

Հոդված 18

Տեղեկությունների օգտագործումը

1. Սույն Համաձայնագրին համապատասխան ստացված տեղեկություններն ունեն գաղտնի բնույթ և կարող են օգտագործվել միայն մաքսային նպատակներով, այդ թվում՝ դատարանում, ինչպես նաև վարչական իրավախախտումները և հանցագործությունները կանխելու և կասեցնելու նպատակով: Այլ նպատակներով դրանք կարող են օգտագործվել միայն այն մաքսային մարմնի գրավոր համաձայնության դեպքում, որը տրամադրել է այդ տեղեկությունները:

2. Սույն Համաձայնագրին համապատասխան մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկությունների մասով ապահովվում է գաղտնիության նույնպիսի ռեժիմ, ինչպիսին տվյալ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված է համարժեք բնույթի և բովանդակության տեղեկությունների համար:

Հոդված 19

Լեզուն

Սույն Համաձայնագրի շրջանակներում նամակագրությունն ու տեղեկությունների փոխանակումը կատարվում են ռուսերենով:

Հոդված 20

Վեճերի կարգավորումը

1. Կողմերի միջև ծագող՝ սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, բանակցությունների ու խորհրդակցությունների միջոցով:

2. Եթե վեճի կողմերը բանակցությունների ու խորհրդակցությունների միջոցով վեճը չեն կարգավորում դրանց անցկացման վերաբերյալ՝ վեճի մի կողմից վեճի մյուս կողմին հասցեագրված պաշտոնական գրավոր դիմումը ներկայացնելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում, ապա վեճի կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը, եթե վեճի կարգավորման եղանակների վերաբերյալ վեճի կողմերի միջև այլ պայմանավորվածություն ձեռք չի բերվել:

3. Մաքսային միության հանձնաժողովը Կողմերին աջակցություն է ցուցաբերում վեճի կարգավորման հարցում՝ նախքան այդ վեճը Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը հանձնելը:

Հոդված 21

Փոփոխությունների կատարումը

Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող առանձին արձանագրություններով:

Հոդված 22

Եզրափակիչ դրույթներ

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման և ժամանակավորապես կիրառվում է «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2010 թվականի մայիսի 21-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը յուրաքանչյուր Կողմին կտրամադրի դրա հաստատված պատճենը:

**Բելառուսի
Հանրապետության
Կառավարության կողմից**

(ստորագրություն)

**Ղազախստանի
Հանրապետության
Կառավարության կողմից**

(ստորագրություն)

**Ռուսաստանի
Ղաշնության
Կառավարության կողմից**

(ստորագրություն)